ՆՈՐ-ԴԱՐ

№ 102 ՏԱՍՆԵԻՄԷԿԵՐՈՊ ՏԱՐԻ, Ուրբաթ, 17 Յունիսի 1894 Ուրբաթ, 17 Յունիսի, ՏԱՍՆԵԻՄԷԿԵՐՈՊ ՏԱՐԻ, № 102

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հասալ 5 կոպէկի.
Բաժանորդ պրում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների համար 2 կոպ., բնկրամների համար կրկնապատիկը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Ֆրանս. հասարակապետութեան նոր նախագահի ընտրութիւնը։

Քրոնիկոն.—Կ. Պոլսից։ Ս. առաջնորդի կոչուած «Կանոնքը»։ Աչանից։ Մի բարձրաստիճան անձի այցը Անի քաղաքին։ Ապրակունիսից։ Քաղաքային պարսպի աճուրդը։ Ղազախից։ Սահմանադրութից։ Այգեգործական ուսումնարան Ատարխանում։ Շուշուց։ «Կովկասի գերին»։ Վրիպակ։

Վանական ընծայարաններ։

Թղթակցութիւններ.— Լագոդաղ։

Հազարականը.—Հազարական լուրեր։

Խառն լուրեր։

Հեռագրեր։

Կախ։

Բանասիրական.— Նամակներ Պարակատանից (չարունակ.)։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 16 յունիսի 1894 թ.

ՖՐԱՆՍ. ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

—

Երկու օր առաջ էր, որ հեռագրերը հաղորդեց մեզ Ֆրանսիական Հասարակապետութեան նախագահ Սադի-Կարնոյի մահը։ Իտալացի անիշխանական կազերիօն մի հարուածով վերջ դրեց իւր փառքի գէնիթում գտնուող Ֆրանսիայի ամենախաղաղասէր գործչին։

Եւ այսօր, դեռ հանգուցեալ նախագահի մարմինը հողին չյանձնած՝ հեռագիրը մեզ հաղորդում է նրա յաջորդի, այսինքն՝ Ֆրանսիական Հասարակապետութեան նոր նախագահի ընտրութիւնը։

Ընտրուել է ձայների մեծամասնութեամբ նախագահ՝ Կազմիր Պերիէն։

Երկու օր առաջ Սադի-Կարնոյի սպանութեան լուրը առանալով՝ յայտնեցինք այդ մասին մեր կարծիքը։

Երեք պետական մարդկանց մենք նախագահութեան կանդիտատ էինք ճանաչում՝ Կազմիր Պերիէին, որ մինիստրութիւնից վերջերս ընկնելով՝ պատգամաւորների ժողովի նախագահ էր դարձել և Դիւպուէին, որ պատգամաւորների ժողովի նախագահութիւնը ձգել էր՝ մինիստրութեանը գլուխ անցնելու համար։

Բայց ամենից աւելի հաւանական ընտրելին ասացինք որ Կազիմիր Պերիէն է, և նա այժմ Ֆրանսիայի Հասարակապետութեան նախագահն է։

Այս գործի մէջ նշանաւորն այն է, որի վրայ մենք անցեալ անգամ մատնացոյց արինք, այսինքն այն, որ ֆրանսիական սահմանադրութիւնն իմաստութեամբ և հեռատեսութեամբ նախագահութեան աթոռը թափուր չէ թողնում, այլ իսկոյն նոր նախագահ է ընտրում և միջոց չէ տալիս քաղաքական և հասարակական կեանքի մէջ յայտնուող բաղդախնդիրներին, սողոսկներին փորելու հասարակապետութեան հիմքերը և ոտնակոխ անելու արիւն-քրտինքով և մեծամեծ զոհաբերութեամբ դարերով ձեռք բերած երկրի, ազգի իրաւունքները։

Թագաւորը դեռ չմեռած ժառանգը բարձրանում է արքայական գահը. հանգուցեալ նախագահը դեռ չթաղուած՝ նոր նախագահն արդէն ընտրուած է։ Ֆրանսիացին դրա համար էլ բացականչում է. Le roi est mort, vive le roi.

Այսպէս շտապ և, ինչպէս երեւում է, առանց խանգարումների, նոր նախագահի աջոզ ընտրութիւնը մեծ պատիւ է բերում Ֆրանսիացիների Հայրենասիրութեան։

Մէթէթ չկան միմեանց հակառակող կուսակցութիւնները, մէթէթ չկան մասնաւոր շահեր, մէթէթ չկան պատուի և բարձր պաշտօնի ձգտողներ, բայց այդ ամենը ստորադրուեցաւ Հայրենիքի շահերին, որպէս զի ներքին խառնակութիւնից դրսի թշնամին, օտարը չշահուի։

Մէթէթ չէր կարող պատգամաւորների ժողովը, կամ սենատը, կամ մինիստրութիւնը, կամ Պարլիզի զինուորական կոմենդանտը՝ գեներալ Սոսիէն մտածել այսպէս. Ինչ անենք, որ Սադի-Կարնոն մեռել է, մէթէթ մենք չենք կարող մի աւ ժամանակ կառավարել, ինչ ենք շտապում,—և այնպէս անելին, որ ընտրութիւնը գլուխ չգար, յետաձգուէր։

Այդ անորոշ դրութեան միջոցին այս կամ այն զօրապետի կամ վառամոլ գործիչի գլուխը կըլղանար անշուշտ երկրի կառավարութիւնը իւր ձեռքը ձգելու միտքը... և մնացած չարութիւններն ու ոտնձգութիւններն և ամեն տեսակ անօրինութիւնները արդէն իրենք իրենց կըհետեւէին, իսկ այդ դրու-

Ֆրանսիան սիրտ լինէր և Ֆրանսիական աղգը։

Այդպէս արագութեամբ կատարուած աջող ընտրութիւնը ոչ թէ միայն ապացոյց է, ինչպէս վերն ասացինք, Ֆրանսիական գործիչների Հայրենասիրութեան, այլ և ցոյց է տալիս, որ այդ ազգն արժանի է ազգ կոչուելու։ Այն ազգը, որ թոյլ կըտայ անպատիժ իրեն հետ խաղալու և իւր շահերն ու հաստատութիւնները ոտնակոխ անելու՝ նա ազգ չէ, նա կորած է։

Ֆրանսիական ազգը մեծանում է և աւելի զօրեղանում։

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ՆԵՄԵԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(Իմ ճանապարհորդական յիշողութիւններից։)

ԽՕՋ ԵՒ ՍԱԼՄԱՍՏ

—

Խոյից Սալմաստը մի օրուայ ճանապարհ է, որ յաճախակի երթեւեկութիւնների պատճառով բաւական ապահով է, այնպէս որ քարւանններ կազմելու հարկ չկայ, եթէ դարձեալ քարւաններ են բանում դէպի Սալմաստ, Կարին, Վան և այլ տեղեր, Խօյում մի քանի չաթթ մնալուց յետոյ վարձեցի Ալլահվերդի անունով թուրք չարվադարից մի ձի. նա ունէր երեք ձի. միւնն էլ մի ասորի բժիշկ վարձեց, իսկ միւսի համար պատահական ճանապարհորդ չգտանք։

Առաւօտեան ծէգն արդէն բացուել էր. Խօյ քաղաքը նոր էր զարթնել. իւր առաջին ճառագայթներն արձակել էր Չարլղանի դեռ նոր նիրհող, լեռնաչղթաների գագաթներին և ցնցուղի նման տարածուել էր կանաչազարդ ծաղկուէտ արօտամարգերի և հասկացից արտերի վրայ. ծիլանի հազարեռանգ գոյներով փայլփլում էին ցօղի կենարար կաթիլները։ Կեղտոտ, փոշոտ, գիշերուայ միջատներով լի պարսկական հիւրանոցում չդիմանալով՝ Խօյում ինձ համար մի առանձին սենեակ էի վարձել հայաբնակ գիւղում, որտեղ վարձու սենեակներն առհասարակ ածան են տրւում օտարականներին։ Այդ վարձած սենեակս կահաւորուած էր, պատուհանները նայում էին դէպի գաւիթը, ուր մի ծաղկանոց և մի ջրի աւազան կար։ Խօյի հայաբնակ թաղերը մասամբ իրենց մաքրութեամբ և գեղեցիկ չէնքերով և բակերով, իրենց ծաղկանոցներով ու աւազաններով, նաև չուկային մօտ լինելով, աւելի սիրապաշտաճ տեսարան ունին քան թէ թրքական այն մի քանի թաղերն, ուրից նեղ, ծուռ ու մուռ փողոցներից անցնելով՝ մի կերպ վզուանքով հազիւ կարողացանք առուտրականներից դուրս մի տեղ կանգ առնել։ Այստեղ ոչ մի լամայի, պահանջելով։ Մի կերպ դրանց բաւականութիւն տուինք մի քանի ղուանից ձեռք քաշելով։ Այս Դեադուկում գրեթէ կէս ժամ տարածութեան վրայ ճանապարհը չարունակւում է տեղ տեղ լայն ու նեղ սկաւառականման ձորի մէջով. չրջակայ գիւղերում ապրում են աւազակաբարոյ մարդիկ, որոնք չատ անգամ դուրս են գալիս իրենց սրջերից ճանապարհորդներին կողոպտելու։ Ճանապարհին հանդիպած գիւղերը բոլորը թրքաբնակ են. այս կողմերը մինչև Սալմաստ ոչ մի հայ գիւղ չես գտնիլ։ Այդ չարաբաստիկ, ահարկու ձորից դուրս եկանք մի ընդարձակ դաշտ, որի հեռու եզերքներում երեւում էին կուսունկների նման բազմաթիւ փոքրատիպ լեռների չղթաներ։ Այդ տեղից ճանապարհը միակերպ անցնում է ընդարձակ հարթ դաշտի միջով, երկու կողմից ճօճում են ոսկեփայլ արտեր. քիչ հեռւում երեսին հայ գիւղերի մօտ ընկած վարունկի, սեխի և ձմերկի բոստանները և խաղողի այգինները, որ մի առանձին գեղեցկութիւն են տալիս իրենց մէջ

---

*) Տես «Նոր-Դար» № 100։

մարդ չէր երեւում, այլ երբեմն երբեմն անցնում էին մեր մօտից կապոյտ սաւանով փաթաթուած ու երեսները չոբէնդով քօղարկած կանայք։

Շարժուեցան վերջապէս մի քանի քարաւան, մենք միացանք նրանց խմբի հետ, Ատուած կանչեցինք ու ճանապարհ ընկանք։

Առհասարակ չարվադարներն ոտով են գնում. մեզ հետ գնացող մօտ 30—40 գրաստից բաղկացած քարաւաններում բոլոր չարվադարները գնում են ոտով։ Մեր չարվադարը սիրային արկածների անձնատուր եղած՝ բարձրահասակ երիտասարդ է, քաշում է թրքական մի քանի սիրավէպ—կրքոտ երգեր, որոնց մարդ լսում է մի առանձին ամօթխածութեամբ. բայց չարվադարը չարունակ երգում է առանձին անուշ ժանօք ու հնալով հետևում մեզ, քարաւանը հանդարտ է գնում. օրական 25—35 վերստ անցնելով։ Միջօրէի ժամանակ հասանք անվտանգ Դեադուկը, ուր Պարսից կառավարութեան կողմից նշանակուած զինուորները—ռախտարները—կանգնեցրին մեզ տա-

---

կզպիտցած գիւղական անակներին։

Երեկոյեան դէմ հասանք Սալմաստի հողերի սահմաններին, իսկ գիշերուայ ժամը արդէն 10-ն էր, երբ մտանք Սալմաստ՝ Խոսրովագիւղաքաղաքը։ Գիւղը խորը քնի մէջ էր. մի $^3/_4$ ժամուայ չափ գիւղի մէջ պտտելուց յետոյ հնգանք մի տան դուռը կանգ առանք։ Դուռը բացվելուց անմիջապէս մի վաթսուն տարեկան ալեւոր մարդ ճրագը ձեռին դուրս գալով մեր առաջն եկաւ, և մենք ներս մտանք այդ ծերունու տունը, որի ընդարձակ բակի մէջ մի գեղեցիկ պարտէզ էր ձգուած գանազան գոյնզգոյն ծաղիկներով և չատրուանով։ Բնակարանի սենեակները կահաւորուած էին կիսասլարսկական ճաշակով. — յատակի վրայ փռուած տեսայ սիրուն գորգեր, պատերի տակ չարուած էին մի քանի բազմոցներ։ Դռան մեծութեան չափ պատուհանները, հագցրած կարմիր և դեղնաւուն ապակիներով, բացելու ժամանակ կէսը վեր էին բարձրացնում իւրաքանչիւրի տակ նեցուկ դնելով երկաթից չինած օղակներ։ Տան տէրը մի բարի,

---

վանահայր արժ. Սահակեանոս վարդապետ Խականդարեանը, գիւղիս քահանաները, և ծխական պարոցի տնօրէն ուսուցչի առաջնորդութեամբ։ Կէսօրուայ ժամը 12-ին պ. Նահանգապետն իջնելով կառքից՝ բարեւեց հոգևորականութեան և հասարակութեան կողմից։ Ապա դիմելով հասարակութեանը հարցրեց, թէ ինչպէս են կատարւում, չրի և այլ նեղութիւններ չեն քաշում. պատասխանեցին, թէ չնորհիւ իրենց գաւառապետի ա-

ապրում են։ Յետոյ այցելեց ս. տաճարը և առանձնացաւ վանահօր սենեակը, որտեղ և հաշի նստեց։ Ժամը 3-ին թէյ ընդունելուց յետոյ, չնորհակալութիւն յայտնելով ուղևորուեց Շուռութ գիւղը, ուր և կարգադրուած էր գիշերելու։ Թէ ընդունելութեան և թէ հաշի միջոցին թարգմանի պաշտօն էր վարում տեղւոյս ուսուցիչ պ. Ամբատ Յարութիւնեանը։ Ուղեկիցներն էին՝ պ. Նահանգապետի կանցելիարեայի կառավարիչը, գաւառապետը, Ջավար-Դուլի խանը, ուրիշ պատիճանաւորներ և և ձիաւորներ։ Ինչպէս լսեցինք՝ այցեցած գիւղերի հասարակութիւններն առանց բացառութեան չնորհակալութիւն յայտնել պ. Նահանգապետից։

Ցունիսի 14-ին երկրորդ անգամ աճուրդ հղաւ կապալով տալու համար Կուր գետի վրայ բանող Թիֆլիսի քաղաքային պարոսը երեք տարի ժամանակամիջոցով։ Աճուրդը մնացած է պ. Պալատեանցին 7, 500 րուբլով։ Առաջին աճրդի ժամանակ պարոսը մնացել էր պ. Նազարեանցին 8067 րուբլով. բայց յետոյ նա հրաժարուեց աճրդից և այդպիսով նրա տուած 1000 ր. գրաւականը մնաց քաղաքին։

ՂԱԶԱԽԻՑ.—Կարծում ենք, որ այս տարի աւազակութիւնը Ղազախում կըլկին կրսկսուի։ Սրանից մի չաբաթ առաջ Խանիալը թուրք գիւղից գողութիւն

ՍԱՍՏԱՆԻՑ.—Ծանր հիվանդ 12-ին հոգեբուժարան տեղափոխեցին 1893/94 ուս. տարվա ընթացքում 1-ին դասարանում սովորող Ս. Ս. Սահակյանին։ Նրան ուղեկցում էին նաև հոգեբույժ Ա. Ա. Ալեքսանդրովը և ուսուցիչ Ա. Ա. Ալեքսանդրովը։

Հիշեցնենք, որ Ս. Սահակյանը հոգեկան հիվանդություն է ունեցել դեռևս 1891 թ.։ Հիվանդությունը սկսվել է ուսման հետ կապված ուժասպառությունից։ Հիվանդությունը ծանր ընթացք է ունեցել։ Հիվանդը մի քանի անգամ փորձել է ինքնասպան լինել։ Ներկայումս նրա վիճակը համեմատաբար լավ է։

ՍԱՍՆԱՊՈՒՐՑԻ.—Ձմեռային ամիսներին Սասնապուրցի գյուղացիները ձյան մեջ մեծ դժվարությամբ են անցնում Մուշ–Սասուն ճանապարհը։ Ձյան հաստությունը հասնում է 2 մետրի։

Ձյան պատճառով ուշանում է նաև փոստը։ Այսպես, օրինակ, փոստը, որ 1893/94 ուս. տարվա դեկտեմբերի 19-ին պետք է ժամաներ Սասուն, հասավ միայն 1894 թվականի հունվարի 12-ին։

ԱՍՏԱՊՈՒՐՑԻ.—Ձմեռային ամիսներին Սասնապուրցի գյուղացիները ձյան մեջ մեծ դժվարությամբ են անցնում Մուշ–Սասուն ճանապարհը։ Ձյան հաստությունը հասնում է 2 մետրի։

Ձյան պատճառով ուշանում է նաև փոստը։ Այսպես, օրինակ, փոստը, որ 1893/94 ուս. տարվա դեկտեմբերի 19-ին պետք է ժամաներ Սասուն, հասավ միայն 1894 թվականի հունվարի 12-ին։

Վանի վիլայեթ.—Նոյեմբերի 4100-ում վիլայեթում կար 1893/94 ուս. տարվա դեկտեմբերի 19-ին 2 ½ տոկոս։ Ընդհանուր գումարը 38 ր. 50 կ., նրանից՝ Վանում՝ 30 ր., Ալաշկերտում՝ 5 ր., Բերկրիում՝ 3 ր. 50 կ.։ Ընդհանուր գումարից 38 ր. 50 կ. վճարվել է 1893/94 ուս. տարվա դեկտեմբերի 19-ին։ Ընդհանուր գումարից 38 ր. 50 կ. վճարվել է 1893/94 ուս. տարվա դեկտեմբերի 19-ին։

Վանի վիլայեթ.—Նոյեմբերի 4100-ում վիլայեթում կար 1893/94 ուս. տարվա դեկտեմբերի 19-ին 2 ½ տոկոս։ Ընդհանուր գումարը 38 ր. 50 կ., նրանից՝ Վանում՝ 30 ր., Ալաշկերտում՝ 5 ր., Բերկրիում՝ 3 ր. 50 կ.։ Ընդհանուր գումարից 38 ր. 50 կ. վճարվել է 1893/94 ուս. տարվա դեկտեմբերի 19-ին։

Մանկական օգնության ընկերությունը Պետերբուրգում ունի 6 մանկապարտեզ, որոնցում 1893 թ. հունվարի 1-ին եղել է 1200 երեխա։ Ընդհանուր ծախսը 1893 թ. եղել է 26—27 հազար ռուբլի։ Մեկ երեխայի համար տարեկան ծախսը 15—20 ռուբլի է եղել։

Մանկական օգնության ընկերությունը Պետերբուրգում ունի 6 մանկապարտեզ, որոնցում 1893 թ. հունվարի 1-ին եղել է 1200 երեխա։ Ընդհանուր ծախսը 1893 թ. եղել է 26—27 հազար ռուբլի։ Մեկ երեխայի համար տարեկան ծախսը 15—20 ռուբլի է եղել։

Ընդհանուր ուսուցչական ժողովը որոշել է ուսուցչական ընտանիքների համար ստեղծել տարեկան 1 ½ հազար ռուբլի կենսաթոշակ։ Ուսուցչական ժողովը որոշել է նաև ուսուցչական ընտանիքների համար ստեղծել տարեկան 1 ½ հազար ռուբլի կենսաթոշակ։

Ընդհանուր ուսուցչական ժողովը որոշել է նաև ուսուցչական ընտանիքների համար ստեղծել տարեկան 1 ½ հազար ռուբլի կենսաթոշակ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՐԵՒԱՆ, 7 դեկտեմբերի.—Մեր վերջին տեղեկագրից հետո ընթացել են հետևյալ կարևոր աշխատանքները.

Ընդհանուր ղեկավարությունը հանձնարարել է ընկ. Ա. Ղուկասյանին։

խնդիրը, նրան դիմաւորեցին սուլթանի պալատականները։

ՎԻԵՆՆԱ.—Ունգարական ազխատաղն ընդունեց դաւանութիւնների ազատութեամբ մասին օրինագիծը, որի օրութեանն հրէական կրօնը միւս կրօններին համահաւասար իրաւունքներ ունցող կրօն է ճանաչւում։

ՎԵՐՈԱՑԻ.—Կավիմիր Պէրիէն ընտուհց հասարակապետութեան նախագահ 451 ձայնով։

ԿԱՀ, 20 մայիսի.—«Նոր-Դար»-ի 47 №-ում տպուած էր մի լուր Կախ աւանից, որի սոյն պատասխանին՝ ճշմարտութիւնը վերականգնելու համար, անդրում եմ բարեհաճէք տեղ տալ Պ. աատուն գրում է հետեւեալը։

Այս օրերս այստեղ պատահեց մի գործ, որ մեծ խօսակցութեան ու լուանցման տեղիք է տուել տեղիս հայ և Թուրք ժողովրդին։ Գոլ ծը հետեւեալն է։ Տեղիս բազարի հայ և Թուրք ժողովուրդը մի համախօսականով պատաւորուել է տալ Կախի ռուսաց երկգասեան դպրոցին տարեկան հարիւր ր. այն դէպքում, երբ բազարից երեխաները լինին կարդալիս ուսումնարաւում։ Այդ գումարն իւրաքանչիւր տարի բազարի ժողովուրդը ժողովել՝ յանձնել է դեպուտատին, որ հասցնէ նայիրին, սրանից ստացական ստանալով։ Բայց վարչութիւնը փոխանակ մի հարիւր ր. պահանջելու. երկու հարիւր է առնում, ասելով թէ 92 Թուի փողը չէ վճարուած։

Այս լսելով ժողովուրդը, գնում է նայիրի մօտ յայտնելու թէ՝ 92 Թուի հարիւր ր. վճարել են իրենց դեպուտատին և նա հասցրել է նախկին նայիրը Գեգելաչվիլուն։ Ապա դառնալով պահանջում է դեպուտատից, որ վճարման ստացականը ցոյց տայ իրենց։ Նա առաջ յայտնում է, որ վճարման ստացականը թղթերի մէջ խառնուած է, կըգտնէ և ցոյց կըտայ, բայց մի քանի օրից յայտնում է թէ ստացականը կորցրել է։ Վրդովուած ժողովուրդը կրկին գնում է նայիրի մօտ և մի ամիս ժամանակ է խնդրում փողի մասին, մինչև որ խնդիրը տան ուր հարկն է այս գործը պարզելու։ Նայիրը ժամանակ է տալիս, բայց մի քանի օրից հրամայում է տալ 200 ր. և հաւաքւում է գումարը։

Ես առաջ բերի պ. լրատուի դրածը, բայց ահա բանը ինչումն է։ 1889 Թուին Կախ գիւղում բացուեց երկդասեան ռուսաց ուսումնարան. նպատակ մի համախօսական վճիռ և խընդիրքով ներկայացրին ուսումնարանի վարչութեան. հասարակութիւնը պարտաւորւում էր իւրաքանչիւր տարի վճարել ուսումնարանին մի հարիւր ռուբլի, միևնոյն ժամանակ բերանացի յայտնաւորուելով, որ այդ վճարը լիներ երեխայոց ծնողներից իւրաքանչիւր տարին։ Ընդունուեց այդ խնդիրքը, և երեխայքը սկսեցին յաճախել ուսումնարան. համաձայն պայմանին՝ 1889 և 1890 Թուականների փողերը վճարեցին երեխայոց ծնողները։ Այն ժամանակ ես բաղդ ունէի դեպուտատ լինելու. այդ փողերը ժողովեցի ու հասցրի ըստ պատկանելոյն, որի համար ունիմ ըստացականներ։ 1891 Թուականի վճարը պահանջելիս չնայելով որ իւրաքանչիւր երեխայի համար վճար էր ընկնում 6-ից 7 ռուբլի, երեխայոց ծնողները մերժեցին վճարել, օգտուելով այն բանից, որ եթէ իրենք չվճարին, վարչութիւնը, համաձայն համախօսական վճռի, պիտի պահանջի հասարակութիւնից։ Եւ այդպէս վարչութիւնը պահանջելով, երեխաների ծնողները մերժելով, այդ Թուականի վճարը յետաձգուեց մինչև 1892 Թիւ փետրուար ամիսը։ Այդ ամսին, երբ վարչութիւնը դիմեց խիստ միջոցների, ես էլ դեպուտատ լինելով, հասարակութեան համաձայնութեամբ մի քանի աղքատ երեխայոց վճարները առնելով հասարակութեան վրայ և մնացեալը ժողովելով երեխայոց ծնողներից, ներկայացրի նոյն ամսին ուր հարկն է, որի համար ունիմ նոյնպէս ստացական։ 1892 Թուի սեպտեմբեր ամսին վարչութիւնը սկսեց պահանջել 1892 Թուականի վճարը երեխայոց ծնողները վերջնականապէս մերժեցին, ասելով՝ կըդիմենք ուր հարկն է ոչնչացնելու համախօսական վճիռը, այնուհետև իւրաքանչիւր ոք իւր երեխայի ուսման հոգսը քաշէ։ Այսպէս հասարակութիւնը խնդիրք ներկայացրեց ուսումնարանի վարչութեանը, որ ոչնչացնէ համախօսական վճիռը, բայց ստացաւ մերժում. այդ Թուականի վճարը յետաձգուեց մինչև 1894 Թիւ փետրուար ամիսը՝ բարդուելով դրա վրայ և 1893 Թուականի վճարը։ Պահանջը չարունակւում էր մնալ պահանջ, մերժումը մերժում, մինչև որ վարչութիւնը դիմեց ոստիկանութեան։ Ոստիկանութիւնը պահանջեց երկու տարուայ վճարն ամենաթխտա կերպով պնդելով, որ հակառակ դէպքում խանութներից ապրանք կըքաշեն և ահռելով կըվճառեն։ Այդ ժամանակ ես բաղդ չունէի դեպուտատ լինելու. ի յաջորդներս ոստիկանութեան մի քանի ծառայողների հետ միասին ժողովեցին հասարակութիւնից երկու տարուայ վճարը և ներկայացրին ոստիկանութեան։ Այս անգամից յետոյ մեր երեխաների ծնողների և հասարակութեան միջև վէճ ծագեց, որի ժամանակ վարչութեան մի ներկայացուցիչ ասելացրեց թէ 1892 Թուականի գումարը վճարուած է. սկսեցին պատել ու քննել, բայց ընթերցողները տեսան, որ 1892 Թուի իմ ժողոված փողը ոչ թէ նոյն տարուայ համար էր, այլ 1891 Թուականի։ Այդ օրերում դիպուածով այցելոց մեզ Զաքաթալի գաւառապետը, որին դիմեցին վարչութեանցից մի քանիսը, թէ ես մի տարուայ վճարը սեպհականել եմ. գաւառապետը կանչեց ինձ, հարցրեց վարչութեան թէ քանի տարուայ գումար են վճարել դեպուտատին. պատասխանեցին, որ վճարել են երեք տարուանը։ Ես ներկայացրի իմ երեք տարուայ ժողոված գումարների ստացականները։ Գաւառապետը հաշիւը քննելով մերժից նըրանց խնդիրքը։ Այս է եղելութիւնը։

Նախկին դեպուտատ
Օվնաթան Ովնաթանեան։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հոպենաւերի



Երթևեկութիւնը Բաթումի և Օդեսայի միջև մայիսի 8-ից սկսած.

ԲԱԹՈՒՄԻՑ ՕԴԵՍՍԱ ԴՆՈՒՄ Է չաբաթ գիշեր, ժամը 2-ին, չըրջանառու գծով. հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Երկուշաբթի գիշեր, ժամը 2-ին, չըրջանառու ընթացքով, հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Երեքշաբթի գիշերը, ժամը 2-ին չըրջանառու ընթացքով, հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, երեկոյեան 11½ ժամին ճեպընթաց գնացքով, Ելիզաւետ և Սևաստոպոլի վրայով։

Հինգշաբթի, ցերեկը ժամը 12-ին, Նովոռասիյսկի և Կերչի վրայով։

ՕԴԵՍՍԱՑԻՑ ԲԱԹՈՒՄ ԴԱԼԻՍ ԵՆ. Կիրակի, երկուշաբթի, ուրբաթ օրերը, երեկոյեան չրջանառու ընթացքով։

Ուրբաթ օրերը, ճեպընթաց գնացքով։

Չորեքշաբթի առաւօտեան ուղիղ գծով, «Վրաստան» ընկերութեան գործակալութիւնը գտնւում է Փիթղ. Ապն. բանկի գալերէյում, №№ 117 և 118.

Երկաթուղու գնացքներ։

Թիֆլիսից Բաթում գնում է

մարդատար գնացքը առաւօտեան 9 ժամ 30 րոպէին, իսկ Բաթում հասնում է երեկոյեան 9 ժամ 45 րոպէին։ Պոստային գնացքը երեկոյեան 6 ժամ 50 րոպէին. Բաթում հասնում է 8 ժ. 15 րոպէին։

Բաթումից Թիֆլիս գալիս է

մարդատար գնացքը առաւօտեան 9 ժ. 40 րոպէին։ Թիֆլիս հասնում է երեկոյեան 9 ժ. 55 րոպէին։ Պոստային գնացքը գիշերը 11 ժ. 20 րոպէին, Թիֆլիս հասնում է ցերեկը 12 ժամ 25 րոպէին։

Թիֆլիսից Բագու գնում է

պոստային գնացքը ցերեկը 1 ժամ 10 րոպէին, Բագու հասնում է առաւօտեան 7 ժամ. 30 ր.։

Բագուից Թիֆլիս գալիս է

Պոստային գնացքը գիշերը 11 ժ. 5 րոպէին, Թիֆլիս գալիս է երեկոյեան 5 ժ. 50 րոպէին։

Թիֆլիսից Գանձակ գնում է

ապրանքակիր-մարդատար գնացքը երեկոյեան 7 ժամ 27 րոպէին, Գանձակ հասնում է առաւօտեան 7 ժ. 40 ր.

Գանձակից Թիֆլիս գալիս է

ապրանքակիր-մարդատար գնացքը երեկոյեան 6 ժամին, Թիֆլիս գալիս է առաւօտեան 7 ժամ 35 րոպէին։

Թիֆլիսից Միխայլովո դնում է

մարդատար-ապրանքակիր գնացքը ցերեկը ժամը 3-ին, Միխայլովո հասնում է երեկոյեան 7 ժ. 15 ր.։

Միխայլովոյից Թիֆլիս գալիս է

ապրանքակիր-մարդատար գնացքը գիշերը 1 ժ. 30 ր. Թիֆլիս գալիս է առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՈՒՍՈՒՑԻՉ

Օրբազար քաղաքի ծխական ուսումնարանին Չարկաւոր է մի ուսուցիչ ռուսերէն և Հայոց լեզուի 500 րուբլի ռոճիկով։ Ցանկացողը կարող դիմել Հետևեալ Հասցեով՝ Армянскъ Тавр. губ. Попечителью армянск. приходск. Училища.

(604) 30—4

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ,

որ ունի 5-դ կարգի իրաւունք և երեք տարի պարապել է ուսուցչութեամբ ցանկանում է Հայոց ծխական դպրոցներում ունենալ ուսուցչի պաշտօն ռուսաց լեզուից և թուաբանութիւնից։ Ցանկացողները կարող են դիմել Հետևեալ Հասցեով՝ въ Астрахань въ Армянское Агабабовскоеу училище, учителю Вардану Аветовичу Шелковникову.

(602) 5—3

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
«ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ»
Յ. ՃԱՂԱՐԲԵԿԵԱՆ.

Գինն է 60 կոպ.

Վաճառւում է կեդրոնական և Զաք. Գրիգորեանի գրավաճառանոցներում։

Գեղմարով գնողներին մեծ զեղչ։

Օտարաքաղաքացիք դիմում են. Тифлисъ, Акону Джагарбекянъ (редак. „Норъ-Даръ“).

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Cie

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷ ԵԻ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը երկու չաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷՑԼ.

Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսուն և Կ. Պոլիս քաղաքները։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գիջումներով ունին։

Բաթումից մեկնում է՝
Չորեքշաբթի՝ յունիսի 29 յունիսի 11 յուլիսի չոգենաւ «Մինգրելիա» կապիտան «Փեքուէ» և այդպէս երկու չաբաթը մի անգամ չորեք. օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։ Տեղեկութիւններ ստանալու համար Թող բարեհաճեն դիմել հետևեալ գործակալներին.

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱԱՐՆՈՅԻՆ, Նաբերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐՍԿՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարտուղարուայ Գէօրգ աղայի։
Բագուում—պ. Սամսէլ Դիլբարեանին, Կոլիբեակինսկայա հրապարակ։
Նովոռոսիսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՅԻՆ։

(262) 20—1

торговый домъ

М. А. НОВИКОВЪ и П. И. ВОЛКОВЪ

въ Москвѣ,

Оптовый складъ и контора—Черкаскій пер., д. Хаджиконста.

ПРОДАЖА

шелка, бумаги, аграманта, бахромы, лентъ, кружевъ, пуговицъ, чулокъ, перчатокъ, корсетовъ, вѣеровъ и модно-галантерейныхъ товаровъ заграничныхъ и русскихъ фабрикъ.

ПРІЕМЪ ЗАКАЗОВЪ

на мебельные и драпировочные приборы.

(271) 25—12

ԿԱՆԱՆՑ ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ՄԻՋՈՑ



БЕРЕЗОВЫЙ БАЛЬЗАМЪ

Д-РА ЛЕНГИЛЯ ВЪ ВѢНѢ.

Ճանապարհածախսը Եւրոպ. Ռուսիայի համար 70 կ., Ասիակ. Ռուսիայի՝ 1 ր., Գերմանիայ պահեստն ամբողջ Ռուսիայի համար Վ. Ա. ՍԻՒԹԻՒՄԻ մօտ, Պետերբուրգ Կալոկալ. 18—19։ Վաճառւում է Ռուսիայի պարքիւմերայնին և դեղատներում և մի քանի դեղատներում։

(М.) 10—6.

Թարմ է ածւում կաչին դէմքն և ձեռքերը լուանալու համար։ Թոթ. եղանուշ. բալզամը պատրաստւելիս գլխաւորապէս ուշադրութիւն է դարձրած այն բանի վրայ, որ սրա բաղադրութեան մէջ բացառապէս մտնեն կաղու վրայ վատ ազդեցութիւն չանող նիւթեր։ Մի սրուակի գինը՝ 1 ր. 65 կոպ. ԲԵՆ ՋՕԵԻ ՕԾԱՒԻՂ 35 և 50 կ. կարը, ՍՊԱՍՕ ՕԾԱՆԼԱՓԿ (որ կոլդ-կրեմից աւելի լաւ է). 1 ր.։

ԱՊԱՀՈՎԱԴ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵԱԿՈՐ“

Հարթրազդին Հատատուած 1872 Թուին

Հիմնական դրամագլուխը 2.500,000 ր.,
Բացի պահեստի գումարներից։

ԿԵՆԴՐՈՆ ԱՊԱՀՈՎԵՑՆՈՒՄ Է առանձնապէս ձեռնտու պայմաններով. արտօնութիւններ են տրւում ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Ծովային, գետային եւ ցամաքային

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Շարժական եւ անշարժ ամենատեսակ կայքերի

ԿՐԱԿԻՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Կանոնները, պայմանները, գրաւոր և բերանացի բացատրութիւնները կարելի է ստանալ՝ ԹԻՓԼԻՍՈՒՄ՝ — Ընկերութեան Կովկասի շրջանի Վարչութեան մէջ, Բարոնսկայա փ. տ. Կոլուբանկու, և Ընկերութեան գործակալի Ալէքսանդր Պետրոսեան Զաւրիեանի մօտ, Վելեամինովսկայա, № 2, քաղաքային տան մօտ։

(276) 50—38.

Тифлисъ. Дозв. Цензурою 17-го Іюня 1894 г. Տպարան և Վիմագ. Ա. Մելիք-Շահնազարեանցի. Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ. Арм. Приход. Школы